ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 06-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06.10.2023թ.

1. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի (այսուհետ՝ Տեսչական մարմին) կառավարման խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 2023 թվականի հոկտեմբերի 06-ի հերթական նիստին.

ա) մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար, Խորհրդի նախագահ

Ա. Դանիելյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ն. Տերյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Ա. Հարությունյան - ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Կ. Չիլինգարյան - «Սպառողների խորհրդատվության կենտրոն» նախագահ, Խորհրդի անդամ

Է. Էլբակյան - ՀԱՊՀ մինչբուհական կրթության գծով պրոռեկտոր , Խորհրդի անդամ

Կ.Սահակյան - ԵՊՀ դասախոս, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, Խորհրդի անդամ

Գ. Սահակյան - Խորհրդի քարտուղար

Ա. Կոտոյան – Տեսչական մարմնի ղեկավար

Ա. Մկրտչյան – Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ

Ա. Սարգսյան - Տեսչական մարմնի որակի ապահովման վարչության պետ

Ա.Բաբայան – «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ–ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

բ) բացակայում էին՝

Է. Հակոբյան - ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Լ.Նանուշյան - ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ, Խորհրդի անդամ

Տ. Քեյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ-ի աջակցության ծրագրերի ղեկավար, Խորհրդի անդամ

Հերթական նիստի օրակարգային հարցեր.

2. Օրակարգում ընդգրկված հարցերն էին՝

1. Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3. Բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում:
   Հարցը ներկայացնող՝ Ա.Կոտոյան

4. Հավանություն տալ այսուհետ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում կատարվող փոփոխություններին:
   Զեկուցող՝ Ա.Կոտոյան

5. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

6. Հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:
   Զեկուցող՝ Ա.Սարգսյան

7. Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին կիսամյակում

իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում:
Զեկուցող՝ Ա.Սարգսյան

8. Հավանություն տալ ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023թ. 2-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

9. ՀՀ շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին:
Զեկուցող՝ Ա.Կոտոյան

3.1 Օրակարգային հարց՝ նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ քննարկում.

Նախորդ նիստին տրված հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ օրակարգային հարցը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արմեն Կոտոյանը: Նա հայտնեց, որ նախորդ նիստին Առինջ Մոլ առևտրի կենտրոնում առևտրական գործունեությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների մոտ ստուգումներ իրականացնելու վերաբերյալ տրված հանձնարարականը կատարվում է և համաձայն ՀՀ վարչապետի թիվ 02/50.4/21334-2023 հանձնարարականի ՇՎՏՄ-ին վերապահված լիազորությունների շրջանակներում 59 տնտեսավարողների մոտ իրականացվում են ստուգումներ, որոնց արդյունքներով ոչ պարենային արտադրանքի համապատասխանության գնահատման փաստաթղթերի խախտումներ չեն հայտնաբերվել ընդամենը 6 տնտեսավարողների մոտ: Մյուս հանձնարարականը վերաբերվում է թվայնացման եղանակով Տեսչական մարմնի գործառույթների իրականացմանը, ինչի վերաբերյալ Արմեն Կոտոյանը հայտնեց, որ թվայնացման հարցը վերաբերվում է ոչ միայն ՇՎՏՄ-ին, ուստի հարցի լուծումը գտնվում է Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի տիրույթում և Տեսչական մարմինը դեռևս անելիք չունի: Ինչին ի պատասխան՝ Արմեն Դանիելյանը հայտնեց, որ թվայնացման ռիսկի մեթոդոլոգիան, որը պետք է լինի տեսչական մարմինների գործունեության ուղեղը, գտնվում է ավարտական փուլում և թվայնացման սկզբմունքը ներկայացվել է թվայնացման խորհուրդ: Թվայնացման սկզբունքը խորհրդի հավանությանն արժանանալուց հետո

մեթոդոլոգիան պատրաստ կլինի և կմնան որոշ հարցեր կապված ԷԿԵՆԳ-ի հետ: Սակայն թվայնացման հետ կապված կարևորագույն խնդիրն է ինֆորմացիայի թվային ստացումը, որի աշխատանքները ՊԵԿ-ի և այլ մարմինների հետ ընթացքի մեջ են: Իսկ ապրանքների հետվերադարձի և փոխանակման գործընթացի հետ կապված Արմեն Կոտոյանը հայտնեց, որ ՇՎՏՄ-ի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ աշխատանքի արդյունքում պատրաստվում են սոցիալական գովազդներ, որոնց նպատակն է իրազեկել ազգաբնակչությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին առ այն, որ ապրանքների հետվերադարձի և փոխանակման հետ կապված վերահսկողությունը գտնվում է տեղական ինքնակառավարման մարմինների տիրույթում:

3.2 Օրակարգային հարց՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2024 թվականի բյուջետային հայտի նախագծին.

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի բյուջետային հայտի նախագծին:

3.3 Օրակարգային հարց՝ բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ քննարկում.

Բենզինի օկտանային թվի լաբորատոր փորձաքննություն իրականացնելու վերաբերյալ հարցը ներկայացրեց Արմեն Կոտոյանը և հայտնեց, որ ՇՎՏՄ-ն արդեն ունի փորձաքննություն իրականացնելու համար հավատարմագրված լաբորատորիա, սակայն օկտանային թվի ցուցանիշը որոշելու մասով դեռևս չի հավատարմագրվել: Տեսչական մարմինը ունի երկու մեթոդով աշխատող լաբորատոր սարք, և նրանցից առաջինով իրականացվել են բազմաթիվ փորձաքննություններ և բենզինի օկտանային թիվը ճշգրիտ որոշվել է, ուստի խնդրեց Խորհրդի անդամներին մինչև բենզինի օկտանային թիվը որոշելու համար փորձաքննություն իրականացնող սարքի հավատարմագրելը իրենց համաձայնությունը տալ իրականացնել ստուգման ընթացքում փորձաքննություն և միայն բենզինի օկտանային թվի անհամապատասխանության դեպքում դիմել ՍՉԱՄ-ին՝ իրենց հավատարմագրված սարքով իրականացնելու փորձաքննություն և տալու համապատասխան արձանագրություն: Տվյալ եղանակով փորձաքննության իրականացնելը Տեսչական մարմնին կտա հնարավորություն խուսափելու ավելորդ ծախսերից: Տվյալ եղանակով իրականացվող

փորձաքննությանը առարկեց Արմեն Դանիելյանը, հայտնելով, որ անհնարին է չհավատարմագրված սարքով իրականացնել փորձաքննություն, քանի որ դա հավատրմագրման պահանջի խախտում է և ասաց, որ եթե ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը, որպես ոլորտի պատասխանատու կհավաստիացնի, որ խնդիր չի տեսնում, ապա կարող են գնալ առաջ: Արմեն Կոտոլյանի խնդրանքով Նարեկ Տերյանը մեկ շաբաթվա ընթացքում տվյալ հարցը կճշտի հավատարմագրում իրականացնող ՊՈԱԿ-ի հետ, և արդյունքում կորոշվի հարցի հետագան:

3.4 Օրակարգային հարց՝ հավանություն տալ այսուհետ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում կատարվող փոփոխություններին.

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ այսուհետ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի հաստիքացուցակում կատարվող փոփոխություններին :

3.5 Օրակարգային հարց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը.

Որոշվեց միաձայն՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը:

3.6 Օրակարգային հարց՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը.

Որոշվեց միաձայն՝ հաստատել Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատումը:

3.7 Օրակարգային հարց՝ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվության ներկայացում.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2023 թվականի 1-ին կիսամյակում իրականացրած հսկողական գործողությունների վերաբերյալ հաշվետվությունը ներկայացրեց որակի ապահովման վարչության պետ Արարատ Սարգսյանը:

3.8 Օրակարգային հարց՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը.

Որոշվեց միաձայն՝ հավանություն տալ Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի 2023 թվականի 2-րդ եռամսյակի ընթացքում թեժ գծով ստացված հեռախոսազանգերի և դիմում-բողոքների վերաբերյալ հաշվետվությանը:

3.9 Օրակարգային հարց՝ Հայաստանի Հանրպետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ կայանալիք նիստի ամսաթիվը համաձայնեցնելու մասին.

Հայաստանի Հանրապետության շուկայի վերահսկողության տեսչական մարմնի կառավարման խորհրդի հաջորդ հերթական նիստը անցկացնել 2023թ. նոյեմբերի 17-ին ժամը 16:00-ին Հայատանի Հանրպետության էկոնոմիկայի նախարարությունում՝ ք.Երևան Միհեր Մկրտչյան 5 շենք հասցեում:

Խորհրդի նախագահ՝

_____ Վ.Քերոբյան
ստորագրություն

Խորհրդի քարտուղար՝

_____ Գ.Սահակյան
ստորագրություն